

րանի, Ապասանի եւ Մասէր Սուլէյմանի եկեղեցւոյ եւ Գալոցի Հոգաբարձութեանց, Նոր-Ջուղայի Կրօնական եւ Համայնական խորհուրդներու, իրենց գործակցութեան եւ հանգանակութեան գործին տուած արագին քափին եւ բաւարար յաջողութեան համար:

Մասնաւորապէս մեր գոհունակութիւնը կը յայտնենք Թեհրանի մամլոյ ներկայացուցիչներու, «Ալիք»ի, «Յախաւել»ի եւ «Վեհաձնունդ»ի պատուարժան խմբագրութեանց, որոնք մեր առաքելութեան շուրջ եւ մասին հանրութեան ու շահութեան յանձնեցին մեր կոչերն ու շնորհակալիքի արտայայտութիւնները, իրենց էջերէն:

Անմոռանալի է մանաւանդ Մեծ. Տիար Ս. Նազարեանի անվերապան եւ անկեղծ բարեկամական վերաբերմունքն ու սէրը Ս. Արտին հանդէպ եւ մեզ՝ ինչպէս նաեւ իր օժանդակութիւնը՝ ամեն գործի եւ դժուարութեանց մէջ, մեր Պարսկաստան պանդըխտութեան շրջանին:

Կարելի չէ երբեք մտահան ընել Տֆր. Ա. Աղայեանի այնքան ազնիւ եւ ազդու միջամտութիւնը՝ որով արագին եւ անկեղծ զգացումներով օգտակար եղաւ մեզ մեծապէս դժուարութիւններու հարթման գործին մէջ:

Օրհնութիւն մանաւանդ բոլոր ազնիւ նուիրատուներու, որոնք, անսխիւս եւ անսարբեր չմնացին Ս. Արտին եւ ժողովուրդին կարիքին եւ դժբախտութեան դիմաց, եւ իրենց արագին լուծմաներով փափաքեցան օժանդակել եւ մեղմել անոնց պէսքերը, ըստ կարողութեան եւ զոհողութեան բաժիններով. բոլ Տեքը, վարձանասոյց ըլլայ եւ բիւրապակե պոյ գուրները իր առաստաղեցի շնորհին եւ բարիքին զեղուն բաւխումովը:

ՀԱՅՐԻԿ ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ

Նուիրակ Ս. Նրաւաղէմի

Նոր Ջուղայէն, ձեռամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ապանեանի (Նուիրակ Ս. Նրաւաղէմի), շնորհակալութեամբ ստացուած է հետեւեալ նուէրները.

1. — Տէր եւ Տիկին Սարգիս Դշխոյ Օհանեաններէ՝ մէկ ասեղնագործ Բառակաւոյի սեղանի ներմակ ծածկոց:

2. — Տիկին Սօֆիա Կոստանեանէ՝ երկու հաս ինքնաձեռագործ փոքրիկ կտորներով վարագոյր Ս. Գրիգորի:

3. — Տիկին Ռօզա Աղամալէ, իր վաղամեռիկ դստեր Ռօմիլայի յիշատակին մէկ քիւլէ կանաչ յասակով վարագոյր Ս. Գրիգորի. երկու բոլորաբայ եւ երկու աւետարանի բնիկ:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

● 3 Յունիս Կիր. — ԼՁ. օր Յիմնաց. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատրան մէջ. Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան:

● 5 Յունիս Դշ. — Կէսօրէ վերջ, ժամը 4.45ին, Ս. Աթոռ ժամանեց Դեք. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեան, Պէյրութ-Գալանտիա օդային զօով:

● 6 Յունիս Դշ. — Կէսօրէ վերջ, ժամը 1.30ին, Հոգ. վարդապետ հայրեր, Դեք. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի զխաւարութեամբ բարձրացան Համբարձման լեռ, ուր Համբարձման Սրբատեղւոյն վրայ կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին հանդիսաւոր նախատօնակը, իսկ զիշերասկիզբին «Եկեացէ» և «Հսկում», որոնց յաջորդեցին զիշերային և առաւօտեան ժամերգութիւնները. Արարողութիւնները վերջացան կէսգիշերին, որմէ ետք Միաբանութիւն և ժողովուրդ վերադարձան մայրավանք:

● 7 Յունիս Եշ. — Համբարձում Տեառն մերոյ Յիսուսի Բրիստօսի. առաւօտեան ժամը 7-ին, Միաբանութիւնը՝ զխաւարութեամբ Դեք. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի, ինքնաշարժերու շարանով մը՝ բարձրացաւ Համբարձման լեռ: Համբարձման Սրբատեղւոյն մօտաքը եղաւ «Հրաշափառ»ի հանդիսութեամբ, որմէ ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Դեք. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեան: Քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, բնարան ունենալով «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեացէ ինձ օգնութիւն»: Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, իսկ յաւարտ Ս. Պատարագի մեծահանդէս «Ճողատան», որմէ վերջ՝ Միաբանութիւն և ժողովուրդ պաշտօնական գնացքով վերադարձան մայրավանք:

— Ն. Վ. Անգլիոյ Թագաւորի ծննդեան տարեդարձի առիթով, քաղաքիս Բրիտանական Ընդհ. Հիւպատոսի և իր տիկնոջ կողմէ եղած հրաւերին ընդառաջելով, Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տ. Պարգեւ և Միւռոն վարդապետաց, ինչպէս նաև Տիար Կարպիս Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ պատուոյ ընդունելութեան, որ տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 6.30ին, էլ-Ջահրա պանդոկին մէջ:

● 9 Յունիս Եր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, հանդիսապետութեամբ Դեք. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեանի:

● 10 Յունիս Կիր. — Բ. Ծաղկազարդ. առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը մա-

տուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, Պատարագին էր Հոգ. Տ. Միւռոն վրդ. Կրճիկեան, Յետ Ս. Պատարագի, Նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի, կատարուեցաւ հոգեհանգիստ Գեր. Տ. Կարապետ Ս. Արքեպս. Մագլըմանի և Հոգ. Տ. Ներսէս վրդ. Թորոսեանի մահուան քառասունքին առթիւ. ապա Միաբանութիւնը կատարեց մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն վերջինին հողակոյտին վրայ, Զամ-թա. Ղի գերեզմանատան մէջ:

— Յետ միջօրէի ժամը 5ին, Հոգ. Տ. Հայրիկ վրդ. Ասլանեան, որ իբր Ս. Աթոռոյ նուիրակ երեք ամիսներէ ի վեր Պարսկաստան կը գտնուէր, Ս. Աթոռ վերադարձաւ՝ Թեհրան — Պէյրութ — Գալանտա օդային գծով:

● 16 Յունիս Եր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին մեծահնդէս Նախատեակը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի մէջ, Նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի, իսկ գիրչերասկիզբին կատարուեցաւ «Եկեցե՛ք» և «Հովման» աւարողութիւնները:

● 17 Յունիս Կիր. — Հոգեգալուս. հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի մէջ, Պատարագին էր Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեան, Յետ Ս. Պատարագի, Նախագահութեամբ Հոգ. Տ. Հայկազուն վրդ. Արրահամանի, կատարուեցաւ օրուան տօնին յատուկ հոգեհանգստեան կարգը, որ կրկնուեցաւ նաև Երջանկայիշատակ Տ. Կիւրեղ Ս. Պատրիարք Հօր լիւրմին վրայ:

● 18-23 Յունիս. — Ամբողջ շաբթուան ընթացքին Ս. Աթոռոյ նորընծայ Հոգ. Տ. Տաւէն, Անուշաւան, Վարուժան, Կիւրեղ և Օշական արեղաները և Տ. Արշալիր քահանայ մատուցին իրենց անդրանիկ Ս. Պատարագները Ս. Յակոբեանց Մայր Տաճարի մէջ:

● 21 Յունիս Եշ. — Հոգ. Տ. Եղիշէ Արք. Կիւրեան, Անթիլիաօի Միաբանութեան, Ամանի ճամբով՝ Ս. Աթոռ ժամանեց:

● 23 Յունիս Եր. — Կէսօրէ առաջ, ժամը 10ին, Երուսաղէմի Վսեմ. Բաղաքապետ Արէֆ փաշա էլ-Արէֆ քաղաքապետարանի կազմով՝ այցելեց Պատրիարքարան, ապա շրջեցաւ Ս. Աթոռոյ զանազան հաստատութիւնները, ինչպէս՝ Տպարան, Մատենադարան, Վարժարաններ, Ժողովրդային խոհանոց և այլն: Վսեմ. Բաղաքապետը հիւրասիրուեցաւ Պատրիարքական Տեղապահի ֆոխանորդ Հոգ. Տ. Հայկազուն վրդ. Արրահամանի և հոգեշնորհ հայրերու կողմէ:

● 24 Յունիս Կիր. — Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի մէջ, պատարագին էր նորընծայ արեղաներու վարժիկ և ուսուցիչը՝ Հոգ. Տ. Հայկազուն վրդ. Արրահաման: Ըստ աւանդական սովորութեան Ս. Պատարագին կը ապաստակէին վեց նորընծաները: Քարոզեց պատարագիչ հայրը, բնաբան ունենալով Ս. Գրքէն «Նախանձ տանք կերիցէ զիս» համարը, թեւադրելով նորըն-

ծաներուն Աստուծոյ Տան և Ս. Աթոռին մշտութեան Նախանձախնդրութիւնը ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ, Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ Հայրապետական հանդիսաւոր մաղթանք, Ամենայն Հայոց Սրբազնագոյն և վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գէորգ Զ. կաթողիկոսի օծման եօթներորդ տարեդարձին առթիւ: Ապա հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունք երջանկայիշատակ Տ. Կիւրեղ Ս. Պատրիարք Հօր հոգւոյն ի հանգիստ, իր գերեզմանին վրայ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի ներքին դռնին մէջ, ի ներկայութեան ամբողջ Միաբանութեան և Ժողովրդեան հոծ բաղմութեան:

— Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին Նախատեակը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ, Նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի:

— Ս. Աթոռոյ Գեր. Տեղապահ Հայրը, ինչպէս նաև Հոգ. Տ. Ս. Սուրէն և Նորայր վարդապետներ, Պէյրութի օդակայանէն մեկնեցան Ս. Լէմվաձին՝ եպիսկոպոսանալու համար:

● 25 Յունիս Բշ. — Ս. Կալստանց Լուիսիմեանց Ս. Պատարագը՝ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ Ս. Լուիսիմեանց մատրան մէջ, մատուց Հոգ. Տ. Յակոբ վրդ. Վարդանեան:

— Առաւօտեան ժամը 8.30ին բացումը կատարուեցաւ Ս. Թ. Վարժարանի ամալերջի բերանացի քննութեանց, Տնօրէն Ժողովոյ անդամք, Նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի, ներկայ գտնուեցան բերանացի քննութեանց:

● 26 Յունիս Գշ. — Առաւօտեան ժամը 9ին, Հոգ. Տ. Միւռոն վրդ. Կրճիկեան, Գալանտա — Պէյրութ օդային գծով մեկնեցաւ Կ. Պոլիս, իր նոր պաշտօնատեղին:

● 27 Յունիս Դշ. — Տեղւոյն Բրիտանական Լիւսաւառարանի հրաւերին՝ ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Հայկազուն վրդ. Արրահաման, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ վրդ. Ասլանեանի և Տիար Կարպիս Լիւրիկեանի, Վսեմ. Լիւսաւառարանի մէջ ի Եշիս — Ճարան: Սոյն հաւաքոյթը կազմակերպուած էր Վսեմ. Լիւսաւառարանի Ս. Բաղաքապետ մեկնումին առթիւ:

● 29 Յունիս Ուրբ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին Նախատեակը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի:

● 30 Յունիս Եր. — Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւառչին. յիշատակ ելանելոյն ի վիճակէն Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի, Ս. Ստեփանոս մատրան, Ս. Գրիգոր Լուսաւառչի սեղանին վրայ: Պատարագեց Հոգ. Տ. Մաշտոց Արք. Բարկուսեան:

— Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին Նախատեակը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի մէջ, Նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեանի: